

Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի

2021թ. մայիսի 10-ի թիվ 1695 – Լ հրամանի

## ՀՐԱՀԱՆԳ

### «ՊՐՈԳՐԻՆ ԴԵԶ-8» ԱՆՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՈՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՊՐՈԳՐԻՆ ԴԵԶ-8» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է թափանցիկ, բաց դեղնավուն, յուրահատուկ թույլ հոտով հեղուկ: Որպես ազդող նյութեր՝ միջոցը պարունակում է 48% դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի չորրորդային ամոնիումային միացությունների, 32% ակլիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի խառնուրդ, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ: Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի փակ փաթեթավորմամբ 5 տարի է: Աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետը 28 օր է՝ մութ տեղում, փակ տարաներում պահելու դեպքում: Միջոցը չափաճրարված է 0,1 և 1 Լ տարողությամբ պոլիմերային շշերում, 3 և 5 և 10 Լ տարողությամբ կանխատրներում, 50 և 100 և 200 Լ տարողությամբ տակառներում:

2. Միջոցն օժտված է հակամանրէային ազդեցությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ ներհիվանդանոցային վարակների և տուբերկուլոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ ադենովիրուսները, գրիպի վիրուսները, պարագրիպի վիրուսները, թոչնի, խոզի գրիպի և գրիպի այլ տեսակի վիրուսները, սուր շնչառական վարակների հարուցիչները, էնտերովիրուսները, ռոտավիրուսները, պոլիոմիելիտի վիրուսը, ընդերային, արտաընդերային հեպատիտների վիրուսները, հերպեսը, ատիպիկ թոքաբորբը, ՄԻԱՎ-վարակը և այլն), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված *Asperigillus niger*-ի վրա), անաէրոբ վարակի հարուցիչների նկատմամբ: Միջոցն օժտված է լավ լվացող և դեզոդորացնող ազդեցությամբ, չի ֆիքսում օրգանական աղտոտվածությունը, չի առաջացնում տարբեր նյութերից

պատրաստված արտադրատեսակների կոռոզիա: Միջոցը պահպանում է իր հատկությունները սառչելուց և հետագա հալչելուց հետո: Միջոցն ըստ ԳՕՍՍ 12.1.044-89 պատկանում է հրդեհանվտանգ, պայթյունանվտանգ նյութերին: Միջոցը համատեղելի չէ օճառների և անիոնային մակերեսային ակտիվ նյութերի, սինթետիկ լվացող միջոցների հետ:

3. Միջոցն ըստ ԳՕՍՍ 12.1.007-76՝ օրգանիզմի վրա ազդեցության աստիճանով ստամոքս ներմուծելիս պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 3-րդ դասին, մաշկի վրա լցվելիս՝ քիչ վտանգավոր միացությունների 4-րդ դասին, արտաընդերային ներմուծման ժամանակ՝ քիչ թունավոր նյութերի 4-րդ դասին, ցնդելիության աստիճանով ( $C_{20}$ ) գոլորշիների տեսքով ներշնչական (ինհալյացիոն) ազդեցության ժամանակ միջոցը քիչ վտանգավոր է, միջոցը ունի չափավոր տեղային-գրգռիչ ազդեցություն մաշկի և արտահայտված ազդեցություն՝ աչքերի լորձաթաղանթի վրա: Միջոցն օժտված չէ գերզգայունացնող և մաշկային ռեզորբտիվ ազդեցությամբ: Միջոցի աշխատանքային լուծույթները չեն առաջացնում մաշկի վրա տեղային-գրգռվածություն մինչև 1% խտության դեպքում, միջոցի աշխատանքային լուծույթները ունեն թույլ գրգռիչ ազդեցություն աչքերի լորձաթաղանթների վրա: Աէրոզոլային ձևով (ռոռոգման եղանակով օգտագործման ժամանակ) աշխատանքային լուծույթներն առաջացնում են շնչառական օրգանների և աչքերի լորձաթաղանթի գրգռվածություն: Միջոցի լուծույթները շփման, ընկղմման և թրջման եղանակներով օգտագործման ժամանակ ներշնչական առումով քիչ վտանգավոր են, այդ թվում և բազմակի ազդեցությունների ժամանակ: Չորրորդային ամոնիումային միացությունների (ՉԱՄ) սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում 1 մգ/մ<sup>3</sup> է (աէրոզոլ):

4. Միջոցը նախատեսված է՝

1) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) (ներառյալ վարակի բարձր ռիսկով սենքերը. վիրասրահ, վիրահատական սեղան, վիրաբուժական գործիքների և այլ բժշկական արտադրատեսակների սեղան (տակդիր), վերակենդանացման և ինտենսիվ բուժման սրահներ, հեմոդիալիզի սրահ, տրանսֆուզիոն կենտրոն, պնևմոֆթիզիատրիկ բաժանմունք, վիրակապարան, գործողությունների սենյակ, կլինիկական, ախտորոշիչ և մանրէաբանական լաբորատորիա, նեոնատոլոգիական բաժանմունք, ծննդատուն, նորածնային

սենյակներ և այլն), մանկական և քրեակատարողական հիմնարկներում, վարակի օջախում՝ ընթացիկ, եզրափակիչ և կանխարգելիչ ախտահանման ժամանակ՝ սենքերում մակերեսների, կոշտ և փափուկ գույքի, հատակի ծածկույթների և պաստառապատման գործվածքների, կահավորանքի պարագաների, սարքերի, սարքավորումների, սանիտարա-տեխնիկական սարքավորումների մակերեսների, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում, լաբորատոր և մեկանգամյա), սպասք լվանալու պարագաների, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, ռետինե, պլաստիկ և այլ պոլիմերային նյութերից կոշիկների, մաքրման պարագաների և նյութերի, խաղալիքների, մարզագույքի, հիվանդի խնամքի պարագաների, անձնական հիգիենայի պարագաների ախտահանման և լվացման համար,

2) Կուլեզների և դրանց հարմարանքների, բարոխցերի, անզգայացման-շնչառական սարքավորման համալրող տարրերի, անեսթեզիոլոգիական սարքավորման ախտահանման համար,

3) Բժշկական կազմակերպությունում բժշկական թափոնների՝ մեկանգամյա կիրառման բժշկական նշանակության արտադրատեսակների (այդ թվում լաբորատոր սպասքի), վիրակապական նոյթերի, մեկանգամյա կիրառման սպիտակեղենի, պատվաստումից հետո սրվակների և ներարկիչների և այլնի՝ դրանք օգտահանելուց առաջ, ինչպես նաև սննդային թափոնների ախտահանման համար,

4) Ալգինատային, սիլիկոնային նյութերից, պոլիէթերային խեժից պատրաստված ատամնաբուժական դրոշմների, մետաղներից, կերամիկայից, պլաստմասից և այլ նյութերից ատամնապրոթեզավորման պատրաստուկների, ատամնաբուժական կայանքների ներծծող համակարգերի, թքարտաձծիչների և թքամանների ախտահանման համար,

5) Բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրահատական և ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող, ատամնաբուժական ծայրակալները և այլն) ձեռքային և մեքենայացված (սահմանված կարգով գրանցված ցանկացած տեսակի ուլտրաձայնային կայանքներում) եղանակներով նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման համար,

6) Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների ձեռքային և մեքենայացված եղանակներով (մասնագիտացված կայանքներում, օրինակ «ԿՐՈՆՏ-

ՈՒԴԷ») նախամանրէազերծման կամ եզրափակիչ մաքրման հետ (բարձր մակարդակի ախտահանումից (ԲՄԱ) առաջ) համակցված ախտահանման համար,

7) Էնդոսկոպների վերջնական մաքրման համար ԲՄԱ-ից առաջ՝ ձեռքային և մեքենայացված եղանակներով (մասնագիտացված կայանքներում, օրինակ «ԿՐՈՆՏ-ՈՒԴԷ»),

8) Սանիտարական տրանսպորտի և սննդի տեղափոխման տրանսպորտի ախտահանման համար,

9) Բժշկական կազմակերպություններում, մանկական նախադպրոցական, դպրոցական և այլ հանրակրթական ու առողջարարական հիմնարկներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում, քրեակատարողական և այլ հիմնարկներում հիմնական մաքրում իրականացնելու համար,

10) Բորբոսի դեմ պայքարելիս,

11) Տարբեր օբյեկտների վրա ցողացրման եղանակով օդի ախտահանման համար, ինչպես նաև օդափոխման և օդորակման համակարգերի ախտահանման համար (կենցաղային օդորակիչներ, սպլիտ-համակարգեր, մուլտիզոնալ սպլիտ-համակարգեր, տանիքի օդորակիչներ, օդափոխման ֆիլտրեր, օդատարներ և այլն),

12) Դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության ձեռնարկություններում ոչ մանրէազերծ դեղամիջոցների արտադրության C և D մաքրության դասերի սենքերի և սարքավորման ախտահանման ու լվացման համար,

13) հասարակական սննդի, պարենային առևտրի ձեռնարկություններում, սպառողական շուկաներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում, հյուրանոցներում, հանրակացարաններում, լողավազաններում, ակվապարկերում, բաղնիքներում, շոգեբաղնիքներում, մարդկանց զանգվածային կուտակման վայրերում սենքերի և սարքավորման (այդ թվում սննդի հետ շփվող) ախտահանման և լվացման համար,

14) Վարսավիրանոցների, մերսման և կոսմետիկ սրահների, գեղեցկության սրահների, լվացքատների, ակումբների, սանթոդարանների և բնակչության սպասարկման ոլորտի այլ սենքերի, սարքավորման, գործիքների, արտահագուստի ախտահանման համար,

15) Աղբահավաք սարքավորման, աղբատար մեքենաների, աղբի բաքերի և աղբահավաքների ախտահանման, մաքրման, լվացման ու դեզոդորացման համար,

16) Դեպի կոյուղի ելք չունեցող ավտոնոմ զուգարանների կուտակային բաքերի պարունակության, ինչպես նաև ավտոնոմ զուգարանների և բիոզուգարանների խցիկներում մակերեսների ախտահանման համար,

17) Բժշկական կազմակերպություններում, աշխտորոշիչ և կլինիկական լաբորատորիաներում, արյան փոխներարկման և հավաքման կայաններում ու կետերում, սանիտարական տրանսպորտում արյան և կենսաբանական արտադրությունների (արյան, մեզի, կղանքի, խորխի, փսխումային զանգվածների) ախտահանման համար:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

5. Միջոցի աշխատանքային լուծույթները պատրաստում են ապակե, էմալապատ (առանց էմալի վնասման), պլաստմասե տարաներում՝ միջոցի համապատասխան քանակն ավելացնելով սենյակային ջերմաստիճանի խմելու ջրին՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ին համապատասխան:

Աղյուսակ 1

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում

Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Պատրաստման համար անհրաժեշտ բաղադրիչների քանակ (մլ)			
	1 Լ աշխատանքային լուծույթ		10 Լ աշխատանքային լուծույթ	
	խտանյութ	ջուր	խտանյութ	ջուր
0,01	0,1	999,9	1	9999
0,015	0,15	999,85	1,5	9998,5
0,02	0,2	999,8	2	9998
0,025	0,25	999,75	2,5	9997,5
0,03	0,3	999,7	3	9997
0,04	0,4	999,6	4	9996
0,05	0,5	999,5	5	9995
0,06	0,6	999,4	6	9994
0,08	0,8	999,2	8	9992
0,1	1	999	10	9990
0,12	1,2	998,8	12	9988

0,15	1,5	998,5	15	9985
0,2	2	998	20	9980
0,25	2,5	997,5	25	9975
0,3	3,0	997	30	9970
0,4	4	996	40	9960
0,5	5	995	50	9950
0,6	6	994	60	9940
0,8	8	992	80	9920
1,0	10	990	100	9900
1,2	12	988	120	9880
1,4	14	986	140	9860
1,5	15	985	150	9850
1,8	18	982	180	9820
2,0	20	980	200	9800
2,5	25	975	250	9750
3,5	35	965	350	9650

### **3. ՄԻՋՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ**

6. Միջոցի աշխատանքային լուծույթները կիրառում են ախտահանման համար՝ սենքերում մակերեսների, կոշտ և փափուկ կահույքի, սարքերի, սանիտարատեխնիկական սարքավորման մակերեսների, լաբորատոր և ճաշարանային սպասքի, այդ թվում մեկանգամյա օգտագործման, սպասք լվանալու պարագաների, սպիտակեղենի, մաքրման պարագաների և նյութերի, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, հիվանդների խնամքի պարագաների, անձնական հիգիենայի միջոցների, խաղալիքների, տեքստիլ նյութերից բժշկական թափոնների, մեկանգամյա կիրառման բժշկական նշանակության արտադրատեսակների՝ օգտահանումից առաջ, սանիտարական տրանսպորտի, հիմնական մաքրում իրականացնելիս և այլն՝ սույն հրահանգի 4-րդ կետի համաձայն:

7. Ախտահանումն իրականացնում են շփման, թրջման, ընկղմման և ոռոգման եղանակներով: Օբյեկտների ախտահանումը շփման եղանակով իրականացվում է առանց անհատական պաշտպանության միջոցների օգտագործման և հիվանդների ներկայությամբ:

8. Սենքերում մակերեսները (հատակ, պատեր և այլն), կոշտ գույքը, կահավորանքի պարագաները, սարքերի, սարքավորումների մակերեսները շփում են միջոցի լուծույթում թրջված լաթով, ծախսի նորման 100 մ/մ<sup>2</sup>: Փափուկ կահույքի, հատակի ծածկերի և գորգերի, ծակոտկեն, անհարթ և խորդուբորդ մակերեսների մշակման ժամանակ միջոցի ծախսի թույլատրելի նորման կազմում է 100-ից մինչև 150 մ/մ<sup>2</sup>, ընդ որում մակերեսները մաքրում են միջոցի լուծույթում թրջված խոզանակներով: Ախտահանումից հետո աշխատանքային լուծույթը մշակված մակերեսներից լվանալ չի պահանջվում: Սննդի հետ շփվող մակերեսների ախտահանումից հետո դրանք լվանում են խմելու ջրով և սրբելով չորացնում են:

9. Նեոնատոլոգիական բաժանմունքում սենքերի՝ շփման եղանակով մաքրման ժամանակ (ծախսի նորման 100 մ/մ<sup>2</sup>), այդ թվում կուլեզների և բարոխցերի արտաքին մակերեսների մշակման ժամանակ միջոցի աշխատանքային լուծույթները օգտագործում են սույն հրահանգի աղյուսակներ 2-5-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

10. Բորբոսի դեմ պայքարելու համար սենքերում մակերեսներն ու աղտոտված օբյեկտները սկզբում մաքրում են բորբոսից, ապա մակերեսները երկու անգամ շփում միջոցի 0,8%-ոց լուծույթում թրջված լաթով, մշակումների միջև միջակայքը՝ 15 րոպե, կամ «Կվազար» տիպի սարքով ոռոգում են երկու անգամ՝ ելնելով 150 մ/մ<sup>2</sup> հաշվարկից, մշակումների միջև միջակայքը՝ 15 րոպե, մնացած օբյեկտները թրջում են կամ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Ախտահանման պահաժամը մշակումից հետո 15 րոպե է: Նմանատիպ կերպով օգտագործում են 0,2% և 0,4% լուծույթ համապատասխանաբար՝ 60 և 30 րոպե պահաժամով: Բորբոսի աճը կանխելու համար մշակումը հետագայում կրկնում են 1 ամիս անց:

11. Օդի ախտահանումն իրականացնում են համապատասխան տեխնիկական կայանքների օգնությամբ՝ աշխատանքային լուծույթը ցողացրման եղանակով սույն հրահանգի աղյուսակ 17 -ում ներկայացված ռեժիմներին համապատասխան, ծախսի նորման 10 մ/մ<sup>3</sup>: Նախապես անց են կացնում մակերեսների ախտահանում, սենքերը հերմետիկ փակում են՝ փակելով պատուհաններն ու դռները, անջատում են ներհուսարտաձիգ օդափոխությունը:

12. Օդափոխման և օդորակման համակարգերի ախտահանումն իրականացնում են դրանց լրիվ անջատելուց հետո (բացառությամբ սույն կետի 8-րդ ենթակետի)

ներգրավելով օդափոխման ճարտարագետների և վերջիններիս ղեկավարությամբ՝ սույն հրահանգի աղյուսակ 17 -ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Օդափոխման և օդորակման համակարգերի կանխարգելիչ ախտահանումն իրականացնում են եռամսյակը մեկ անգամ: Օդափոխման և օդորակման համակարգերի ընթացիկ և եզրափակիչ ախտահանումն իրականացնում են ըստ համաճարակաբանական ցուցումների:

1) Ախտահանման ենթարկվում են՝ օդատարները, օդափոխման հորանները, օդափոխման համակարգերի հովհարիչների ցանցերն ու մակերեսները, սենքերի օդորակիչների և օդորակման համակարգերի կառուցվածքային տարրերի, սպլիտ-համակարգերի, մուլտիզոնալ սպլիտ-համակարգերի, տանիքային օդորակիչների մակերեսները, օդորակիչների օդի մաքրման ու սառեցման խցիկները, մաքրման պարագաները, մշակման ժամանակ հատուկ ուշադրություն են դարձնում կողմնակի միկրոֆլորայի կուտակման վայրերին՝ օդափոխման և օդորակման համակարգերի ճեղքերին, նեղ և դժվար հասանելի տեղերին:

2) Ախտահանումն իրականացնում են շփման, թրջման, ընկղմման, ոռոգման և աէրոզոլացման եղանակներով: Օգտագործում են սենյակային ջերմաստիճանի աշխատանքային լուծույթներ:

3) Ախտահանումից առաջ իրականացնում են մակերեսների լվացում օճառա-սոդային լուծույթով: Ոռոգման կամ շփման եղանակով կանխարգելիչ ախտահանման համար օգտագործում են միջոցի 0,05% կամ 0,1%-ոց ջրային լուծույթ՝ ախտահանման պահաժամը համապատասխանաբար 60 կամ 30 րոպե:

4) Օդային ֆիլտրը կամ լվացվում է օճառա-սոդային լուծույթում և ախտահանվում է ոռոգման կամ ընկղմման եղանակով միջոցի 0,1%-ոց ջրային լուծույթի մեջ 60 րոպեով, կամ փոխարինվում է նորով: Ածխային ֆիլտրը ենթակա է փոխարինման:

5) Օդորակչի ռադիատորային ցանցը և կոնդենսատի կուտակիչը շփում են ախտահանող լուծույթում թրջված լաթով:

6) Օդորակիչների և օդորակման համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսները շփում են միջոցի լուծույթում թրջված լաթով, ծախսի նորման 150 մլ/մ<sup>2</sup>: Շփման եղանակով աշխատանքները կարելի է իրականացնել մարդկանց ներկայությամբ:



7) Ոռոգման եղանակով օբյեկտների մշակումն իրականացնում են հիդրովահանակի կամ ավտոմաքսի օգնությամբ, ծախսի նորման 400 մլ/մ<sup>2</sup>, այլ սարքերի օգնությամբ («Կվազար» տեսակի), ծախսի նորման 250 մլ/մ<sup>2</sup>, աէրոզոլացման եղանակ օգտագործելիս՝ ծախսի նորման՝ 150 մլ/մ<sup>2</sup>, հասնելով հավասարաչափ և առատ թրջման: Պահաժամը լրանալիս աշխատանքային լուծույթի մնացորդը մակերեսից հեռացնում են չոր լաթով:

8) Օդորակման համակարգերի օդի մաքրման և սառեցման խցիկը ախտահանում են ոռոգման կամ աէրոզոլացման եղանակով, ֆիլտրող տարրը հանած օդորակչի աշխատելու ժամանակ, սենքից դեպի օդորակիչ օդի հոսքի ուղղությամբ:

9) Հովհարիչների և օդափոխման համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսները շփում են միջոցի լուծույթում թրջված լաթով:

10) Օդափոխման համակարգերի օդատարները ախտահանում են են ոռոգման եղանակով «Կվազար» տիպի ցողիչից, ծախսի նորման 250 մլ/մ<sup>2</sup> կամ աէրոզոլացման եղանակով, ծախսի նորման 150 մլ/մ<sup>2</sup> է, ինչը իրականացնում են հերթականությամբ՝ ըստ 1-2 հատվածների:

11) Օդորակիչների և օդափոխման համակարգերի օգտագործված ֆիլտրացիոն տարրերը թրջում են միջոցի աշխատանքային լուծույթում: Ախտահանումից հետո ֆիլտրերն օգտահանում են:

12) Օդափոխիչ սարքավորումը մաքրում են խոզանակով, այնուհետև շփում են միջոցի լուծույթում թրջված լաթով կամ ոռոգում են:

13) Ախտահանումից հետո մշակված օբյեկտները վանում են ջրմուղի ջրով և լաթով, չորացնում են չոր լաթով և օդափոխում են:

14) Մաքրման պարագաները թրջում են միջոցի աշխատանքային լուծույթում: Ախտանաման պահաժամից հետո այն պարզաջրում են և չորացնում:

13. Սանիտարա-տեխնիկական սարքավորումը (լոգարան, վացարան, զուգարանակոնք և այլն) մշակում են միջոցի լուծույթով խոզանակի օգնությամբ շփման եղանակով, մշակվող մակերեսի ծախսի նորման 100 մլ/մ<sup>2</sup> է, իսկ ոռոգման դեպքում՝ 300 մլ/մ<sup>2</sup> (հիդրովահանակ, ավտոմաքս) կամ 150 մլ/մ<sup>2</sup> («Կվազար» տեսակի ցողիչ): Ախտանելուց հետո այն վանում են հոսող ջրով:

14. Ոռոգման եղանակով օբյեկտների մշակումը կատարում են հիդրովահանակի, ավտոմաքսի, ցողող գեներատորի և այլ սարքավորման օգնությամբ, որոնք

թույլատրված են տվյալ նպատակների համար, հասնելով հավասարաչափ և առատ թրջման (ծախսի նորման 150 մ/մ<sup>2</sup>-ից մինչև 200 մ/մ<sup>2</sup> «Կվազար» տիպի ցողիչ, 300-350 մ/մ<sup>2</sup> հիդրովահանակ, 150-200 մ/մ<sup>2</sup> ցողող գեներատորներ օգտագործելիս): Ոռոգման եղանակով մակերեսների ախտահանումից հետո տարածքում իրականացնում են խոնավ մաքրում, իսկ սենքը 10-15 րոպե օդափոխում են: Ոչ մեծ մշակվող մակերեսների դեպքում, աշխատանքային լուծույթի մնացորդը մակերեսներից հեռացնում են չոր լաթով, ինչից հետո տարածքը օդափոխում են 10-15 րոպե:

15. Ճաշի սպասքը (այդ թվում մեկանգամյա օգտագործման) ազատում են սննդի մնացորդներից և ամբողջությամբ ընկղմում ախտահանիչ լուծույթի մեջ՝ 1 հավաքածուի համար 2 լ հաշվարկից ելնելով: Ախտահանումից հետո սպասքը խոզանակով լվանում են հոսող խմելու ջրով 3 րոպե, մեկանգամյա օգտագործման սպասքը՝ օգտահանում: Ախտահանումն իրականացնում են առանց սննդի մնացորդների սպասքի ախտահանման ռեժիմով, տեսանելի (չորացած) աղտոտվածության դեպքում մշակումը անհրաժեշտ է իրականացնել սննդի մնացորդներով սպասքի ախտահանման ռեժիմով:

16. Լաբորատոր սպասքը, սպասքի վազման պարագաները ամբողջությամբ ընկղմում են ախտահանող լուծույթի մեջ՝ ելնելով 10 միավորի համար 2 լ հաշվարկից: Ախտահանելուց հետո սպասքը լվանում են հոսող խմելու ջրով 3 րոպե:

17. Սպիտակեղենը թրջում են միջոցի աշխատանքային լուծույթում՝ 1 կգ չոր սպիտակեղենի համար 4 լ հաշվարկից ելնելով: Ախտահանումից հետո սպիտակեղենը լվանում ու պարզաջրում են:

18. Հիվանդի խնամքի պարագաները, անձնական հիգիենայի միջոցները, խաղալիքները, մարզագույքը, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերը ամբողջությամբ ընկղմում են ախտահանող լուծույթի մեջ կամ շփում միջոցի լուծույթում թրջված լաթով: Խոշոր խաղալիքները կարելի է մշակել ոռոգման եղանակով: Ախտահանելուց հետո դրանք 3 րոպե լվանում են հոսող խմելու ջրով, խոշոր խաղալիքները օդափոխում են: Փափուկ խաղալիքները ոռոգում են ելնելով 100 մ/մ<sup>2</sup> հաշվարկից «Կվազար» տեսակի ցողիչ օգտագործելու դեպքում, պահում են պահաժամը, ապա օդափոխում են 15 րոպե:

19. Կոշիկների ներքին մակերեսը երկու անգամ շփում են ախտահանող լուծույթում առատ թրջված խծուծով՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ին համապատասխան:

Պահաժամի ավարտին մշակված մակերեսը շփում են ջրով ու չորացնում: Բաղնիքի ոտնամանները, չստերը և ռետինից, պլաստամասայից ու այլ պոլիմերային նյութերից պատրաստված կոշիկները ախտահանում են լուծույթի մեջ ընկղմելով, թույլ չտալով, որ դրանք լողան: Ախտահանումից հետո դրանք պարզաջրում և չորացնում են:

20. Մաքրման նյութերը թրջում են միջոցի լուծույթում, պարագաները ընկղմում կամ շփում են միջոցի լուծույթում թրջված լաթով, ախտահանումից հետո պարզաջրում և չորացնում են:

21. Կուլեզների ու դրանց հարմարանքների մշակումը սույն հրահանգի 2-րդ կետում նշված բոլոր տեսակի վարակներից իրականացնում են առանձին սենքում՝ երեխաների բացակայությամբ սույն հրահանգի 2-5 աղյուսակներում նշված ռեժիմներին համապատասխան: Կուլեզի և դրա հարմարանքների մակերեսները մանրակրկիտ շփում են միջոցի լուծույթում թրջված լաթով, ծախսի նորման 100 մլ/մ<sup>2</sup>: Ախտահանումից հետո կուլեզի մակերեսը երկու անգամ շփում են մանրէազերծ խմելու ջրում առատորեն թրջված մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով (խանձարուրով), յուրաքանչյուր վաճուռից հետո շփում են մանրէազերծ խանձարուրով մինչև չորանալը: Մշակումից հետո ինկուբատորները անհրաժեշտ է 15 րոպե օդափոխել: Խոնավեցուցիչի ռեգերվուարի, մետաղական ալեմարիչի, օդահավաքման խողովակների, խողովակների, թթվածնի պատրաստման հանգույցի հարմարանքները ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթով տարայի մեջ: Ախտահանելուց հետո բոլոր հարմարանքները լվանում են՝ երկու անգամ ընկղմելով մանրէազերծ ջրի մեջ՝ յուրաքանչյուրը 5 րոպե տևողությամբ, մղելով ջուրը խողովակների միջով: Հարմարանքները չորացնում են մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով: Կուլեզների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կուլեզների արտադրողի առաջարկությունները:

22. Բարոխցերի մշակումն իրականացնում են կուլեզների ախտահանման ռեժիմներով ու տեխնոլոգիայով՝ սույն հրահանգի 21-րդ կետին համապատասխան:

23. Նարկոզա-շնչառական սարքավորման, անեսթեզիոլոգիական սարքավորման քանդվող համալրող տարրերը ախտահանելու համար համալրող տարրերը (էնդոտրախեալ խողովակներ, տրախեոտոմիկ կցորդիչներ, բերանակլման օդատարներ, դիմակներ) 60 րոպեով ընկղմում են միջոցի 0.25% լուծույթի մեջ կամ 30 րոպեով 0.5% լուծույթի մեջ: Ախտահանելուց հետո դրանք հանում են լուծույթով

տարայից և լվանում միջոցի մնացորդներից հաջորդաբար մանրէազերծ խմելու ջրի երկու բաժիններում՝ յուրաքանչյուրում 5-ական բույս, ապա չորացնում և պահում են ասեպտիկ պայմաններում:

24. Միջոցի լուծույթները ախտահանման համար օգտագործում են տարբեր վարակիչ հիվանդությունների ժամանակ սույն հրահանգի 2-5-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

25. Տարբեր հիմնարկներում հիմնական մաքրումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 6-ում ներկայացված համապատասխան վարակների ժամանակ օբյեկտների ախտահանման ռեժիմներին համապատասխան:

26. Սպասարկման ոլորտի, սպորտային, մշակութային, վարչական օբյեկտներում, հասարակական սննդի, պարենային առևտրի կազմակերպություններում, արդյունաբերական շուկաներում, մանկական և այլ հաստատություններում ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 2-ում ներկայացված մանրէային վարակների ժամանակ (բացառությամբ տուբերկուլոզի) օբյեկտների ախտահանման համար առաջարկվող ռեժիմներին համապատասխան: Քրեակատարողական հիմնարկներում ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված տուբերկուլասպան ռեժիմներին համապատասխան:

27. Սպասարկման ոլորտի օբյեկտներում (վարսավիրանոց, գեղեցկության սրահ, կոսմետիկ և մերսման սրահներ և այլն) մակերեսների, սարքավորման, գործիքների ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 5-ում ներկայացված վիրուսային վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

28. Բաղնիքներում, շոգեբաղնիքներում, լողավազաններում, ակվապարկերում ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված դերմատոֆիտիաների ժամանակ օբյեկտների ախտահանման ռեժիմներին համապատասխան կամ, անհրաժեշտության դեպքում, բորբոսային ախտահարումների ժամանակ մշակման համար առաջարկվող ռեժիմներով՝ սույն հրահանգի 10-րդ կետին համապատասխան:

29. Աղբահավաք սարքավորման, աղբատար մեքենաների, աղբի բաքերի և աղբահավաքների, աղբատարների ախտահանման համար կիրառվում է միջոցի 0,1% կամ 0,2% լուծույթը, մշակման մեթոդը նշված է սույն հրահանգի հավելված 1ա-ում:

Դեպի կոյուղի ելք չունեցող ավտոնոմ զուգարանների կուտակային բաքերի, ինչպես նաև ավտոնոմ զուգարանների և բիոզուգարանների խցերում մակերեսների ախտահանումն ու ավտոնոմ զուգարանների ընդունիչ բաքերում կղանքա-միզային խառնուրդի կոնսերվացիան իրականացնում են Հավելված 1բ-ում նկարագրված մեթոդով:

30. Սանիտարական տրանսպորտի և սննդի տեղափոխման տրանսպորտի օբյեկտների մշակումն իրականացնում են ոռոգման կամ շփման եղանակով սույն հրահանգի աղյուսակ 5-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան (վիրուսասպան ռեժիմ): Սնունդ տեղափոխող ավտոտրանսպորտի ախտահանումից հետո մշակված մակերեսները լվանում են ջրով և սրբելով չորացնում: Տրանսպորտի օբյեկտների կանխարգելիչ ախտահանման ժամանակ տեսանելի օրգանական աղտոտվածության բացակայության ժամանակ թույլատրվում է կիրառել սույն հրահանգի աղյուսակ 2-ում ներկայացված մշակման ռեժիմները (մանրէասպան ռեժիմով, բացառությամբ տուբերկուլոզի):

31. Բժշկական կազմակերպությունների, այդ թվում ինֆեկցիոն բաժանմունքների, մաշկա-վեներոլոգիական, ֆթիզիատրիկ և սնկաբանական հիվանդանոցների, սանիտարական տրանսպորտի օբյեկտների, ինչպես նաև ախտածնության 3-4 խմբի մանրէների (բացառությամբ հատուկ վտանգավոր վարակները) հետ աշխատող լաբորատորիաների և այլ հիմնարկների բժշկական, սննդային և այլ թափոնների ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի 2-5 աղյուսակներում և 16-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան, հետագա օգտահանմամբ:

1) Օգտագործված վիրակապական նյութերը, անձեռոցիկները, բամբակե խճուճները, մեկանգամյա օգտագործման սպիտակեղենը ընկղմում են միջոցի լուծույթով տարայի մեջ: Ախտահանելուց հետո թափոնները խտանում են սույն հարահնգի 2-5 աղյուսակներ-ին համապատասխան:

2) Մեկանգամյա օգտագործման բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանումը (այդ թվում պատվաստումից հետո սրվակների և ներարկիչների) իրականացնում են կափարիչով փակվող պլաստմասե կամ էմալպատ (առանց էմալի վնասման) տարաներում: Ախտահանման ժամանակ արտադրատեսակներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Քանդվող

արտադրատեսակներն ընկղմում են լուծույթի մեջ քանդված վիճակում: Փականային մասեր ունեցող արտադրատեսակները ընկղմում են բացված վիճակում՝ նախապես դրանցով լուծույթում մի քանի աշխատանքային շարժում կատարելով, որպեսզի լուծույթը լավ ներթափանցի արտադրատեսակների դժվար հասանելի տեղերը: Թրջելիս (ախտահանման պահաժամ) խողովակներն ու խոռոչները լցվում են լուծույթով (առանց օդային խցանների): Լուծույթի շերտի հաստությունը իրերի վրա կազմում է առնվազն 1 սմ: Ախտահանելուց հետո արտադրատեսակները հանում են լուծույթով տարայից և օգտահանում՝ սույն հրահանգի աղյուսակ 2-5:

3) Բժշկական թափոնների հավաքման և հեռացման համար բեռնարկղերը մշակում են շփման կամ ոռոգման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 2-5:

4) Սննդի մնացորդները խառնում են աշխատանքային լուծույթի հետ՝ 1:1 հարաբերությամբ, պահում են ազդեցության ժամանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 16-ին համապատասխան:

5) Հեղուկ թափոնները, լվացման ջրերը (ներառյալ էնդոսկոպիկ լվացման ջրերը), արյունը, հիվանդի արտադրությունը (խորխ, փսխման զանգվածներ, մեզ, կղանք) խառնում են աշխատանքային լուծույթի հետ՝ 1 բաժին թափոն 2 բաժին լուծույթ հարաբերությամբ, պահում են ազդեցության ժամանակով և օգտահանում, հիվանդի արտադրությունների տարան ընկղմում են լուծույթի մեջ, ախտահանման էքսպոզիցիայից հետո պարզաջրում են հոսող ջրով՝ սույն հրահանգի աղյուսակ 16-ին համապատասխան: Ախտահանող լուծույթը լցվում է անմիջապես տարայի մեջ կամ մակերեսի վրա, որտեղ գտնվում է կենսաբանական նյութը: Ապա ստացված խառնուրդը պահում են համաձայն ախտահանման կիրառվող ռեժիմի: Ախտահանման ժամանակ տարան պետք է կափարիչով փակ լինի: Անձնակազմի կողմից բոլոր աշխատանքները կատարվում են ռետինե ձեռնոցով՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները: Օգտահանման այլ հնարավորությունների բացակայության ժամանակ ախտահանված արյան (արտադրությունների) և միջոցի աշխատանքային լուծույթի խառնուրդը լցվում է կոյուղու մեջ:

32. Դեղագործական և ոչ մանրէազերծ դեղամիջոցների կենսատեխնոլոգիական արդյունաբերության ձեռնարկությունների C և D մաքրության դասերի տարածքներում կանխարգելիչ ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 2-ում ներկայացված ռեժիմներով մանրէային վարակների ռեժիմներով (բացի տուբերկուլոզի):

33. Անաէրոբ վարակների դեպքում ցանկացած օբյեկտների մշակումն իրականացնում են շփման, ոռոգման, թրջման կամ ընկղմման եղանակներով, օգտագործելով միջոցի 0,5%-ոց աշխատանքային լուծույթ՝ պահաժամը 45 րոպե, 1%-ոց լուծույթի դեպքում՝ 30 րոպե, 1,5%-ոց լուծույթի դեպքում՝ 15 րոպե:

**4. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ  
ՆԱԽԱՄԱՆՔԵՐԾՄԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԿՑՎԱԾ**

34. Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանումը, այդ թվում համակցված նախամանրէազերծման հետ, իրականացնում են պլաստմասե կամ էմալպատ (առանց էմալի վնասման) կափարիչներով փակվող տարաներում:

35. Բժշկական նշանակության արտադրատեսակներն ամբողջությամբ անմիջապես դրանց կիրառումից հետո ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ: Քանդվող իրերը ընկղմում են լուծույթի մեջ քանդված վիճակում: Փականային մասեր ունեցող արտադրատեսակները ընկղմում են բացված վիճակում՝ նախապես դրանցով լուծույթում մի քանի աշխատանքային շարժում կատարելով, որպեսզի լուծույթը լավ ներթափանցի իրերի փականային մասի դժվար հասանելի տեղերը: Արտադրատեսակների խողովակներն ու խոռոչները լցնում են լուծույթով առանց օդային խցանների: Լուծույթի շերտի հաստությունը իրերի վրա պետք է լինի առնվազն 1 սմ:

36. Ախտահանման պահաժամից հետո արտադրատեսակները հանում են տարայից և միջոցի մնացորդներից լվանում խմելու ջրով առնվազն 5 րոպե, հատուկ ուշադրություն դարձնելով խողովակների վացմանը (ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով):

37. Միջոցով կոշտ և ճկուն էնդոսկոպների և դրանց գործիքների մշակման ժամանակ հաշվի են առնում էնդոսկոպիկ սարքավորման արտադրողների առաջարկությունները: Միջոցն օգտագործելիս հատուկ ուշադրություն են դարձնում նախնական մաքրմանը: Սարքավորման մշակումը սկսում են անմիջապես էնդոսկոպիկ գործողություններից հետո (խորհուրդ է տրվում թույլ չտալ կենսաբանական աղտոտվածության չորացում): Ընդ որում խստորեն պահպանում են հետևյալ կանոնները՝

1) Էնդոսկոպի արտաքին մակերեսից, այդ թվում օբյեկտիվից, տեսանելի աղտոտվածությունները հեռացնում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով՝ կառավարման բլոկից դեպի դիստալ ծայրը ուղղությամբ:

2) Փականները, խցափակիչները հանում են էնդոսկոպից և էնդոսկոպն անմիջապես ընկղմում են միջոցի լուծույթի մեջ, ապահովելով բոլոր մակերեսների շփումը լուծույթի հետ: Էնդոսկոպի բոլոր խողովակները լվանում են հերթականությամբ մղելով լուծույթը և օդը՝ մինչև կենսածին տեսանելի աղտոտվածությունները ամբողջությամբ լվացվեն:

3) Իրերը թրջում են՝ դրանք ամբողջությամբ ընկղմելով աշխատանքային լուծույթի մեջ, ընդ որում լուծույթը պետք է լցվի խոռոչների և խողովակների մեջ:

4) Իրերը լվանում են նույն լուծույթում, որում թրջել են՝ օգտագործելով հատուկ հարմարանքներ՝ մինչև բոլոր խողովակների լրիվ մաքրվելը:

5) Էնդոսկոպների և դրանց գործիքների լվացումն իրականացնում են սկզբում հոսող խմելու ջրով 5 րոպե, ապա թորած ջրով՝ 1 րոպե:

38. Բժշկական նշանակության արտադրատեսակների մեքենայացված մշակումը իրականացնում են սահմանված կարգով գրանցված ՈՒՁԼ տեսակի ցանկացած կայանքներում («Մեդել», «Ուլտրաէտ», «Կրիստալ-5», «Սերգա», «Էլմասոնիկ» և այլն): Էնդոսկոպների մեքենայացված մշակումը թույլատրվում է իրականացնել սահմանված կարգով գրանցված ցանկացած տեսակի կայանքներում (հայրենական և արտասահմանյան արտադրության) (ԿՐՈՆՏ-ՈՒԴԷ և այլն) կայանքների օգտագործման հրահանգին և էնդոսկոպներ արտադրողների խորհուրդներին համապատասխան:

39. Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատում են արյան մնացորդային քանակության առկայության հայտնաբերման համար ամիդոպիրինային կամ ազոպիրամային փորձով: Վերահսկման ենթակա է միաժամանակ մշակված մեկ անվանման իրերի 1% (բայց առնվազն երեք իր): Արյան մնացորդներ հայտնաբերելիս (դրական փորձ) իրերի ամբողջ խումբը, որից վերահսկման համար ընտրվել են իրերը, ենթակա է կրկնակի մշակման մինչև բացասական արդյունք ստանալը:

40. Տեսանելի աղտոտվածություն չունեցող կամ նախապես դրանք մաքրված արտադրատեսակների ձեռքային եղանակով ախտահանման համար, այդ թվում նախամանրէազերծման հետ համակցված, միջոցի լուծույթները կարող են



օգտագործվել բազմակի՝ պիտանելիության ժամկետի ընթացքում (14 օր), եթե դրանց արտաքին տեսքը չի փոխվել: Արտաքին տեսքի փոփոխման առաջին նշանների ի հայտ գալու դեպքում (գույնի փոփոխություն, լուծույթի պղտորում, նստվածքի առաջացում և այլն) այն անհրաժեշտ է փոխարինել մինչև նշված ժամկետի լրանալը:

41. Արտադրատեսակների ուլտրաձայնային սարքավորումներում մեքենայացված եղանակով ախտահանման համար, այդ թվում նախամանրէազերծման հետ համակցված, միջոցի լուծույթները կարող են օգտագործվել բազմակի աշխատանքային օրվա ընթացքում, եթե դրանց արտաքին տեսքը չի փոխվել: Արտաքին տեսքի փոփոխության առաջին նշանների ի հայտ գալու ժամանակ (գույնի փոփոխություն, լուծույթի պղտորում, նստվածքի առաջացում և այլն) այն անհրաժեշտ է փոխարինել մինչև նշված ժամկետի լրանալը:

42. Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 7-ում:

43. Նախամանրէազերծման հետ համակցված բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ սույն հրահանգի աղյուսակներ 8-9-ում:

44. Նախամանրէազերծման հետ համակցված կոշտ և ճկուն էնդոսկոպների և դրանց գործիքների ախտահանման ռեժիմները ձեռքային կամ մեքենայացված եղանակներով ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 12-13-ում:

**5. ՄԻՋՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ,  
ԷՆԴՈՍԿՈՊՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԻՆՔՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ,  
ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ (ԲՄԱ-ԻՑ ԱՌԱՋ) ՄԱՔՐՄԱՆ  
ՀԱՄԱՐ**

45. Նախամանրէազերծումն իրականացնում են պլաստմասե կամ էմալապատ (առանց էմալի վնասման) կափարիչով փակվող տարաներում: Քանդվող արտադրատեսակները ընկղմում են լուծույթի մեջ քանդված վիճակում: Փականային մասեր ունեցող արտադրատեսակները ընկղմում են բացված վիճակում՝ նախապես դրանցով լուծույթում մի քանի աշխատանքային շարժում կատարելով, որպեսզի լուծույթը լավագույնս ներթափանցի արտադրատեսակների փականային մասի դժվար

հասանելի տեղերը: Արտադրատեսակների խողովակներն ու խոռոչները լցնում են լուծույթով՝ խուսափելով օդային խցանների առաջացումից: Լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ:

46. Էնդոսկոպների և ճկուն էնդոսկոպների բժշկական գործիքների նախնական, նախամանրէազերծման (կամ եզրափակիչ) մաքրումը (ԲՄԱ-ից առաջ) իրականացնում են հաշվի առնելով էնդոսկոպիկ սարքավորման արտադրողների առաջարկությունները:

47. Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատում են արյան մնացորդային քանակության առկայության հայտնաբերման համար ամիդոպիրինային կամ ազոպիրամային փորձով (տե՛ս սույն հրահանգի 39-րդ կետը):

48. Բժշկական նշանակության արտադրատեսակների մեքենայացված եղանակով մշակումը իրականացնում են կայանքների օգտագործման հրահանգին և էնդոսկոպներ արտադրողների առաջարկներին համապատասխան:

49. Բժշկական նշանակության արտադրատեսակների նախամանրէազերծման ռեժիմները ձեռքային և մեքենայացված եղանակով ներկայացված են սույն հրահանգի 10-11 աղյուսակներում, ձեռքային և մեքենայացված եղանակով կոշտ և ճկուն էնդոսկոպների նախնական, նախամանրէազերծման կամ եզրափակիչ մաքրման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի 14-15 աղյուսակներում:

50. Տեսանելի աղտոտվածություն չունեցող արտադրատեսակների կամ այն արտադրատեսակների, որոնք նախապես ձեռքով մաքրվել են, նախամանրէազերծման լուծույթները կարող են օգտագործվել բազմակի պիտանիության ժամկետի ընթացքում (14 օր), եթե դրանց արտաքին տեսքը չի փոխվել: Արտաքին տեսքի փոփոխության առաջին նշանների ի հայտ գալու ժամանակ (գույնի փոփոխություն, լուծույթի պղտորում, նստվածքի առաջացում և այլն) այն փոխարինվում է նորով մինչև նշված ժամկետի լրանալը:

51. Ուլտրաձայնային կայանքներում մեքենայացված եղանակով մաքրված արտադրատեսակների նախամանրէազերծման համար միջոցի լուծույթները կարող են օգտագործվել բազմակի աշխատանքային հերթափոխի կամ աշխատանքային օրվա ընթացքում, եթե դրանց արտաքին տեսքը չի փոխվել: Արտաքին տեսքի փոփոխման առաջին նշանների ի հայտ գալու ժամանակ (գույնի փոփոխություն, լուծույթի

պղտորում, նստվածքի առաջացում և այլն) այն փոխարինվում է նորով, մինչև նշված ժամկետի լրանալը:

Աղյուսակ 2

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով մանրէային վարակների (բացառությամբ տուբերկուլոզի) ժամանակ

Ախտահանման օբյեկտներ*	Լուծույթի խտություն ըստ պատրաստուկի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, հիվանդասենյակների, սարքավորման մակերեսներ, կոշտ կահույք	0,01 0,02 0,05	15 10 5	Շփում, ոռոգում
Գորգեր, փափուկ կահույք	0,015 0,02 0,05	30 15 5	Մշակում խոզանակով
Սանիտարական տրանսպորտ, սննդի տեղափոխման տրանսպորտ կանխարգելիչ ախտահանման ժամանակ	0,01 0,02 0,05	15 10 5	Շփում, ոռոգում
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0,015 0,02 0,05	30 15 5	Շփում, ոռոգում
Հիվանդի խնամքի պարագաներ մետաղից, ապակուց, ռետինից, պլաստմասից, մոմլաթե տակաշորեր	0,015 0,02 0,05	30 15 5	Ընկղմում կամ շփում
Սպասք՝ առանց սննդի մնացորդների, այդ թվում մեկանգամյա օգտագործման	0,01 0,02 0,05	15 10 5	Ընկղմում
Սպասք՝ սննդի մնացորդներով, այդ թվում մեկանգամյա օգտագործման	0,015 0,02 0,05	30 15 10	Ընկղմում

Լարորատոր սպասք, սպասքի վլացման պարագաներ	0,025 0,05 0,1	30 15 10	Ընկղմում
Սպիտակեղեն՝ օրգանական արտադրություններով չաղտոտված	0,015 0,02 0,05	30 15 5	Թրջում
Սպիտակեղեն՝ օրգանական արտադրություններով աղտոտված	0,025 0,05 0,1	30 15 10	Թրջում
Տարբեր նյութերից խաղալիքներ, անձնական հիգիենայի միջոցներ, մարզագույք	0,01 0,02 0,05	15 10 5	Ընկղմում, շփում, ոռոգում (խոշոր)
Բժշկական թափոններ (վիրակապական միջոցներ, մեկանգամյա անկողնային և անհատական սպիտակեղեն, անձնակազմի հագուստ և այլն), բժշկական թափոնների հավաքման բազմակի օգտագործման կոնտեյներներ	0,025 0,05 0,1	30 15 10	Թրջում, ընկղմում
Բժշկական թափոններ (մեկանգամյա օգտագործման բժշկական նշանակության արտադրատեսակներ)	0,03 0,05 0,1	30 15 10	Ընկղմում
Մաքրման պարագաներ, լաթ, սպունգ, անձեռոցիկ	0,025 0,05 0,1	30 15 10	Ընկղմում, թրջում, շփում
Կուվեզներ (նեոնատալ ինկուբատորներ)	0,01 0,02 0,05	15 10 5	Շփում, ընկղմում
Նարկոզա-շնչառական, անեսթեզիոլոգիական սարքավորում և արհեստական շնչառության սարքեր	0,01 0,02 0,05	15 10 5	Շփում, ընկղմում

Ախտահանման պատնեշներ և ախտահանման գորգեր	0.02	-	Լցնում
---	------	---	--------

Նշում. \*՝ օրգանական նյութերով աղտոտված օբյեկտների մշակումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 5-ում ներկայացված վիրուսային վարակների համար առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

### Աղյուսակ 3

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով տուբերկուլոզի ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Լուծույթի խտություն ըստ պատրաստուկի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում, հիվանդասենյակներում մակերեսներ, սարքավորում, կոշտ գույք	0.05	30	Շփում, ոռոգում
	0.1	15	
	0.25	10	
Գորգային ծածկույթներ, փափուկ կահույք	0.05	45	Մշակում խոզանակով
	0.1	30	
	0.25	15	
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0.05	60	Շփում, ոռոգում
	0.1	45	
	0.25	30	
	0.5	15	
Հիվանդի խնամքի պարագաներ մետաղից, ապակուց, ռետինից, պլաստմասից, մոմլաթե տակաշորեր	0.05	45	Ընկղմում կամ շփում
	0.1	30	
	0.25	15	
	0.3	10	
Սպասք՝ առանց սննդի մնացորդների, այդ թվում մեկանգամյա օգտագործման	0.025	30	Ընկղմում
	0.05	15	
	0.1	10	
Սպասք՝ սննդի մնացորդներով, այդ թվում մեկանգամյա օգտագործման	0.05	30	Ընկղմում
	0.1	15	
	0.25	10	

Սպասք սպասքի պարագաներ	լաբորատոր, վլացման	0.05 0.1 0.25	30 15 10	Ընկղմում
Սպիտակեղեն՝ արտադրություններով չաղտոտված	օրգանական	0.05 0.1 0.25 0.3	45 30 15 10	Թրջում
Սպիտակեղեն՝ արտադրություններով աղտոտված	օրգանական	0.1 0.25 0.4	45 30 15	Թրջում
Տարբեր խաղալիքներ, հիգիենայի մարզագույք	նյութերից անձնական միջոցներ,	0.05 0.1 0.25	30 15 10	Ընկղմում, շփում, ռոռզում (խոշոր)
Բժշկական (վիրակապական մեկանգամյա անկողնային և անհատական սպիտակեղեն, անձնակազմի հագուստ և այլն)	թափոններ	0.1 0.25 0.4	45 30 15	Թրջում
Բժշկական (մեկանգամյա օգտագործման նշանակության արտադրատեսակներ)	թափոններ	0.05 0.1 0.25	30 15 10	Ընկղմում, ռոռզում
Մաքրման լաթ, սպունգ, անձեռոցիկ	պարագաներ,	0.1 0.25 0.4	45 30 15	Ընկղմում, թրջում, շփում
Կուլեզներ (նեոնատալ ինկուբատորներ)	(նեոնատալ ինկուբատորներ)	0.05 0.1 0.25	30 15 10	Շփում, ընկղմում
Նարկոզա-շնչառական, անեսթեզիոլոգիական սարքավորում և արհեստական շնչառության սարքեր	և	0.05 0.1 0.25	30 15 10	Շփում, ընկղմում

Ախտահանման պատնեշներ և ախտահանման գորգեր	0.1	-	Լցնում
---	-----	---	--------

Աղյուսակ 4

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով սնկային վարակների  
ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Լուծույթի խտություն ըստ պատրաստուկի, %	Ախտահանման ժամանակ, րոպե		Ախտահանման եղանակ
		կանդիդոզներ	դերմատոֆիտիաներ	
Սենքերում մակերեսներ, հիվանդասենյակների, սարքավորման մակերեսներ, կոշտ կահույք	0.025	30	45	Շփում, ոռոգում
	0.05	15	30	
	0.1	5	15	
	0.25	-	5	
Գորգեր, փափուկ կահույք	0.03	30	45	Մշակում խոզանակով
	0.08	15	30	
	0.15	5	15	
	0.25	-	5	
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0.04	30	45	Շփում, ոռոգում
	0.1	15	30	
	0.2	5	15	
	0.4	-	5	
Հիվանդի խնամքի պարագաներ մետաղից, ապակուց, ռետինից, պլաստմասից, մոմլաթե տակաշորեր	0.025	30	45	Ընկղմում կամ շփում
	0.05	15	30	
	0.1	5	15	
	0.25	-	5	
Սպասք՝ առանց սննդի մնացորդների, այդ թվում մեկանգամյա օգտագործման	0.015	15	-	Ընկղմում
	0.02	5	-	

Սպասք՝ սննդի մնացորդներով, այդ թվում մեկանգամյա օգտագործման	0.025 0.06	15 5	-	Ընկղմում
Լաբորատոր սպասք, սպասքի լվացման պարագաներ	0.025 0.06	20 10	30 15	Ընկղմում
Սպիտակեղեն՝ օրգանական արտադրություններով չաղտոտված	0.03 0.08 0.15 0.25	30 15 5 -	45 30 15 5	Թրջում
Սպիտակեղեն՝ օրգանական արտադրություններով աղտոտված	0.06 0.1 0.2 0.25	30 15 5 -	45 30 15 5	Թրջում
Տարբեր նյութերից խաղալիքներ, անձնական հիգիենայի միջոցներ, մարզագույք	0.025 0.05 0.1 0.25	30 15 5 -	45 30 15 5	Ընկղմում, շփում, ոռոգում (խոշոր)
Բժշկական թափոններ (վիրակապական միջոցներ, մեկանգամյա անկողնային և անհատական սպիտակեղեն, անձնակազմի հագուստ և այլն), բժշկական թափոնների հավաքման բազմակի օգտագործման կոնտեյներներ	0.06 0.1 0.2 0.25	30 15 5 -	45 30 15 5	Թրջում, ընկղմում, ոռոգում
Բժշկական թափոններ (մեկանգամյա օգտագործման բժշկական նշանակության արտադրատեսակներ)	0.015 0.025 0.06	30 20 10	45 30 15	Ընկղմում
Մաքրման պարագաներ, լաթ, սպունգ, անձեռոցիկ	0.06 0.1 0.2 0.25	30 15 5 -	45 30 15 5	Ընկղմում, թրջում, շփում



Կոշկեղեն, ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր	0.05	30	45	Շփում, ընկղմում
	0.1	15	30	
	0.2	5	15	
	0.25	-	5	
Կուլեզներ (նեոնատալ ինկուբատորներ)	0.025	30	45	Շփում, ընկղմում
	0.05	15	30	
	0.1	5	15	
	0.25	-	5	
Նարկոզա-շնչառական, անեսթեզիոլոգիական սարքավորում և արհեստական շնչառության սարքեր	0.025	30	-	Շփում, ընկղմում
	0.05	15		
	0.1	5		
Ախտահանման պատնեշներ և ախտահանման գորգեր	0.05	-	-	Լցնում

Աղյուսակ 5

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով վիրուսային վարակների (ներառյալ արտաըներային և ընդերային հեպատիտների, պոլիոմիելիտի, ՄԻԱՎ վիրուսը, ադենովիրուսը, գրիպի վիրուսները, այդ թվում թռչնի և խոզի գրիպի, պարագրիպի, ՍՇՀ այլ հարուցիչները, էնտերովիրուսներ, ռոտավիրուսներ, հերպես և այլն) և կայուն ներհիվանդանոցային հարուցիչներով առաջացած վարակների ժամանակ, ներառյալ մեթիցիլին-կայուն ստաֆիլակոկը, վանկոմիցին-կայուն էնտերոկոկը և կապտաթարախային ցուպիկը

Ախտահանման օբյեկտներ	Լուծույթի խտությունը ըստ պատրաստուկի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում, հիվանդասենյակներում մակերեսներ, սարքավորում, կոշտ գույք	0.02	30	Շփում, ոռոգում
	0.04	15	
	0.06	5	

Սանիտարական տրանսպորտ, սննդի տեղափոխման տրանսպորտ	0.02 0.04 0.06	30 15 5	Շփում, ոռոգում
